

Հայտարարություն Բելառուսում Telegram-ի Nexta ընդդիմադիր ալիքի ստեղծող Ռոման Պրոտասևիչին ձերբակալելու վերաբերյալ

24 մայիսի, 2021թ., Երևան

Միջազգային լրագրողական հանրությունը Բելառուսի իշխանությունների վրդովեցուցիչ վարքագծի ականատեսը դարձավ: Մայիսի 23-ին Telegram-ի Nexta ընդդիմադիր ալիքի ստեղծող Ռոման Պրոտասևիչին ձերբակալելու համար երկրի ղեկավարությունը կիրառեց աննախադեպ միջոց Աթենք-Վիլնյուս չվերթն իրականացնող Ryanair ընկերության օդանավին ստիպելով վայրէջք կատարել Մինսկում: Սա Բելառուսում լրագրողների հանդեպ անօրինական գործողությունների առաջին դեպքը չէ: Այդ երկրում մեր շատ գործընկերներ տարիներ շարունակ, հատկապես՝ 2020թ. նախագահական խնդրահարույց ընտրություններից հետո, ենթարկվում են անթույլատրելի հետապնդումների:

2016-ի դեկտեմբերին երկրի ղեկավար Ալեքսանդր Լուկաշենկոյի անմիջական մասնակցությամբ ձերբակալվեց և Ադրբեջանին հանձնվեց ճանապարհորդ և բլոգեր Ալեքսանդր Լապշինը: Պաշտոնական Մինսկն անտեսել էր այն հանգամանքը, որ Լապշինը Ռուսաստանի և Իսրայելի քաղաքացի է, իսկ Բելառուսում գտնվում էր որպես արտասահմանցի զբոսաշրջիկ ու երկրի որևէ օրենք չէր խախտել: Հայտնի է, որ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը մայիսի 20-ին՝ Պրոտասևիչի դեպքից ընդամենը 3 օր առաջ, Լապշինի գործով վճիռ կայացրեց՝ Ադրբեջանին մեղադրելով Բաքվի բանտում բլոգերի հանդեպ դաժան կտտանքների, մահափորձի, ինչպես նաև՝ փաստաթղթերի կեղծման համար: ՄԻԵԴ վճիռն անուղղակի մեղադրանք էր նաև Բելառուսի իշխանությունների հասցեին, սակայն դա վերջիններիս հետ չպահեց անթույլատրելի գործողություններից, որոնք ակնհայտ մարտահրավեր էին միջազգային հանրությանը և միջազգային իրավունքին:

Մենք՝ հայաստանյան լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներս, կոչ ենք անում աշխարհի առաջնորդներին՝ վճռական և կոշտ միջոցներ ձեռնարկել խոսքի ազատության սկզբունքները ոտնահարող ռեժիմների դեմ, որոնք է՛լ ավելի են ահագնացնում ճնշումները լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ: Անցյալ տարվա աշնանը 44-օրյա Արցախյան պատերազմում տուժեցին և հայ, և արտասահմանցի մի շարք գործընկերներ, և որպես այդ պատերազմն ապրած երկրի քաղաքացի և լրագրող՝ մենք չենք կարող անտարբեր մնալ ժամանակակից քաղաքակրթության հիմնարար արժեքների ցինիկ մերժման փաստերի նկատմամբ և գրոյական հանդուրժողականություն ենք պահանջում նման դեպքերի հանդեպ:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ԻՆՖՈՐՄԱՑԻՍՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
«ՖԵՄԻՂԱ» ՀԿ